ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 75-րդ հոդվածը, կից ներկայացնում եմ «Հայաստան» խմբակցության որոշումը՝ խմբակցության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0) և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-0651-12.10.2021-ՊԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը առաջնահերթ նախագիծ համարելու մասին՝ այն սահմանված կարգով Ազգային ժողովի նստաշրջանի և 2021թ. դեկտեմբերի 7-ին գումարվող հերթական նիստերի օրակարգերում ներառելու և քննարկում կազմակերպելու նպատակով:

Նկատի առնելով հարցի կարևորությունը առաջարկում ենք օրենքի նախագծի քննարկումը ներառել հերթական նիստի օրակարգի առաջին 7 քննարկվող հարցերի հերթականությունում, ինչպես նաև սահմանել քննարկման համար մինչև 90 րոպե:

Առդիր 2 էջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՕՀԱՆՅԱՆ

01.12.2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 38-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետը և 75-րդ հոդվածը, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը,

Կարևորելով ««Հայաստան» խմբակցության կողմից առաջադրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0) և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-0651-12.10.2021-ՊԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթով (այսուհետ՝ նաև նախագծերի փաթեթ) առաջարկվող կարգավորումը:

Նկատի առնելով այն, որ նախագծերի փաթեթի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը՝ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը 30.11.2021թ. նիստում տվել է բացասական եզրակացություն:

Անհրաժեշտ համարելով նախագծերի փաթեթի քննարկումն Ազգային ժողովի նիստում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Առաջնահերթ համարել ««Հայաստան» խմբակցության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-065-12.10.2021-ՊԻ-011/0) և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Կոդ՝ Խ-0651-12.10.2021-

ՊԻ-011/0) Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը և առաջարկել Ազգային ժողովի նախագահին այն ընդգրկել Ազգային ժողովի նստաշրջանի և 2021թ. դեկտեմբերի 7-ին գումարվող հերթական նիստերի օրակարգերում:

2. Առաջարկել Ազգային ժողովի խորհրդին՝ նախագծերի փաթեթը ընդգրկել հերթական նիստերի օրակարգի առաջին 7 քննարկվող հարցերի հերթականությունում՝ Ազգային ժողովի նիստում քննարկման համար սահմանելով մինչև 90 րոպե:

3. Նախագծերի փաթեթի հիմնական զեկուցողն է «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աղվան Վարդանյանը

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՕՀԱՆՅԱՆ

01.12.2021թ.